

*From the office of*  
TSOLAG MOMJIAN

Հայոց Երուսաղեմի «Կովերու Պարտեզի համաձայնագրի» վերջին զարգացումները.  
Եթե ամփոփելու ըլլանք՝ իրավիճակին հանգամանագ պատկերը հետեւեալն է,

Նուրհան պատրիարքը վանքին կեսը ծախեց:

Մեր փառքը ապականեց, եւ կրնանք ըսել՝ մեր ամբողջ ապագան օտար ազգի, կամ պետութեան յանձնեց:

Այժմ մենք պայմանագրի ամենակարեւոր իրականութեան առջեւ ենք:

Յուլիս 27, 2023 թ. Պարետ Երեցեանը, Մայք Սարեանին տուած հարցազոյցի ատեն ըսաւ հետեւեալը, «Իսրայելի Ներքին գործերու նախարարութեան ներկայացուցիչը այցելեց պատրիարքին, եւ պատրիարքարանին փաստաբանը հոն էր: Եւ ըսին, որ՝ «Մենք կուզենք երրորդ անձ մը, կամ անձ մը, որ պատրիարքի ստորագրութիւնը վաւերացնէ, կամ վկայէ, որ պատրիարքն ինքը ստորագրած է վրան»:<sup>1</sup>

Պարետի վկայութեամբ (տե՛ս Մայք Սարեանին տրուած հարցազոյցը), պատրիարքն ըսած է. «Հայր Պարետը հոս է՝ ինքը թո՛ղ ըլլայ երրորդ անձը, թո՛ղ ստորագրէ»:

Այստեղ ամենակարեւորն այն է, թէ ինչո՞ւ Իսրայելի ներքին գործերու նախարարութիւնը կու գայ եւ Նուրհան Պատրիարքէն ստորագրութիւն մը եւս կը պահանջէ:

Ինչո՞ւ Նուրհան Պատրիարքը, Պարետը եւ փաստաբանները, չեն ըսեր ներքին գործերու նախարարութեան ներկայացուցիչին. «Դուք ո՞վ էք, մենք ստորագրեցինք պայմանագիրը Տանի Րոդմանին հետ»: Այլ խօսքով՝ վանքին պատրիարքը, լուսարարապետը եւ պատրիարքի նշանակեալ՝ ատենի կալուածոց տեսուչ Պ. Երեցեանը, չեն ինդրած կամ պահանջած իշխանութեան ներկայացուցչէն (ո՛վ որ է), որ իշխանութիւնը չմիջամտէ Հայոց Պատրիարքարանի եւ Սրբոց Յակոբեանց Վանքի ներքին հարցերուն:

Բոլորը արդեն գիտէին, որ Իսրայելի կառավարութեան հետ է համաձայնագիրը: Իսրայելի ներկայիս իշխանութիւնը քաղաքական նկրտումներով տոգորուած նպատակ դրած էր Հայոց Վանքը ձեռք ձգել, իսկ Տանի Ռոդման միայն ճակատ էր:

Սա յոյժ շատ յստակ ձեւով ցոյց կուտայ, թէ Իսրայելի Ներքին Գործերու նախարարութիւնն էր, որ վարագոյրի հետեւը բանակցութիւններ կը վարէր պայմանագրի վրայ եւ ոչ թէ պարոն Տանի Ռոդմանը, որուն մասին Պարետը ըսաւ, թէ՝ «Շատ ազնիւ եւ քաղաքավար մարդ մըն է»:

Մինչեւ վերջին վայրկեանը Տանի Րոդմանը չէր հաւատար, որ նման միակողմանի եւ Հայոց այդչափ հակառակ պայմանագիր մը կրնայ յաջողեցնել, զայն կնքել եւ հասուցանել առ ի վաւերացումն: Այն ատեն ինք նոյնիսկ չունէր այդ ընկերութիւնը, որի անունով հետագային

---

<sup>1</sup> Father Barret Yeretsian tonight with Mike Sarian.

HorizonArmenianTV, <https://www.youtube.com/watch?v=D7bNRY6vrR0>

ստորագրեց պայմանագիրը, որով յաջորդ օրն անմիջապես գրանցեց նորաստեղծ կազմակերպութիւն մը (XANA GARDNES organization) ՊՆԷ Բրաքին մէջ:

Վանքի փաստաբաններուն ուղղակի պարտականութիւնն էր, որ օր առաջ ստուգէին այս անձի ինքնութիւնը ու իր ընկերութեան որպիսութիւնը: Սակայն ոչ մէկ պատշաճ իրաւաբանութիւն (Due Diligence) չէն ըրած: Անգորձ եւ անփո՛յթ գտնուած են:

Առանց որևէ կասկածի, որ հետագային այս «պայմանագիրը» պիտի դասաւանդուի աշխարհի իրաւաբանական համալսարաններուն մէջ որպէս Երուսաղէմի Հայ Եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդներուն ծանծաղամտութեան եւ ապիկարութեան հաւաստիք, կամ իբրև տեսանակ, թէ ինչպէս հայ ազգը կորսնցուց իր պատմական երբեմնի փառքը:

Փոխանակ Տանի Բողմանի, «որուն Նուրհան Պատրիարք համակրած եւ սիրած էր հանդիպումին առաջին կէս ժամուան ընթացքին», Իսրայելի Ներքին գործոց Նախարարութիւնը ըսած է Նուրհան Պատրիարքին, որ իր ստորագրութիւնը բաւարար չէ:

Ներքին Գործերու Նախարարութեան պահանջքին վրայ է, որ Նուրհան պատրիարքը իր անձնական շահերիւն համար հրամայած է, որ փոփոխութիւններ ըլլան Համաձայնագրին վրայ: Նուրհան պատրիարքը շատ լաւ գիտէր, որ «Կովերու Պարտեզի» Համաձայնագիրը, Համաձայնագիր մըն է Իսրայելի իշխանութեան հետ, եւ աղէկ գիտցած է՝ ինչի վրայ կը ստորագրէ: Անիկա շատ լաւ գիտէր, որ այս հարցը քաղաքական է: Իսկ հիմա գիտցած է, որ իր ծրագիրն այլևս չի յաջողիր գաղտնի պահել: Հիմա՛ հասկըցած է, որ իր ըրածը մեծ սխալ մըն էր, եւ կը փորձէ պատիժէն փախիլ: Նման օրինակաւ Իրենիոս Յունաց պատրիարքը փորձեց ճողոպրել, բայց ոչ երբեք յաջողեցաւ:

Փաստաբանները՝ Եօսի Ավների եւ Մազէն Գուբդի կատարեցին այն, որ Իսրայելի ՆԳՆ պահանջեց, եւ ոչ շահերը Առագելական Աթոռն Սրբոց Յակոբեանց Երուսաղէմի:

Ես քաջատեղեակ եմ, որ նոյնիսկ Իսրայելի Արտաքին Գործերուն Նախարարութիւնը տեղեակ էր, եւ իրենք եւս ներգրաւուած էին այս հարցին մէջ:

Երբ Իսրայելի արտգործնախարար Էլի Քոհէնին հարցուցին այս խնդրին մասին, անոր դէմքին վերայ յաւերժ ժպիտ մը կար, եւ ոչինչ մեկնաբանեց:

Պարեւ՝ ինք զինք կը կեղծէ, եւ առանց անդրադառնալու, որ ինքն իսկ ըսաւ, թէ՛ ինքը եւ պատրիարքը անմեղօրէն եւ պարզապէս «commercial deal» մը սեպեցին, եւ կամբաստանեն եւ կը մեղադրեն Պաղեստինցիներուն եւ Յորդանանցիներուն, թէ հետագային անոնք խնդիրը վերածեցին քաղաքական հարցի մը: Ի միջի այլոց, Երեցեանը՝ Մայք Սարեանի հարցազրոյցի ատեն ըսաւ, որ ինքը եւ հայր Սամուէլ Աղոյեան պատրիարքին ըսած են, որ այս հարցը Տնօրէն Ժողովի առջեւ բերուի եւ պատրիարքը մերժած է:

Վերջը՝ հայր Սամուէլ Աղոյեան ստորագրած է վկայութիւն մը, որ այս հարցը բերուած էր Տնօրէն Ժողովին առջեւ:

Եթէ Նուրհան Պատրիարքը իրականութիւնն ըսած ըլլար միաբանութեան, Տնօրէն Ժողովը այդ Յայտարարութիւնը, որ ըրաւ Պաղեստինցիներուն եւ Յորդանանցիներուն ըրած քայլին դէմ, չի պիտի ուղարկէր, երբ Նուրհան Պատրիարքին ճանաչումին հրամանը

(Ֆերմանը) սառեցուցին Մայիս 11, 2023 թ.: Նուրհան Պատրիարք չը բերաւ այս հարցը Տնօրէն Ժողովին առջեւ, որովհետեւ շատ լաւ գիտեր, որ Տնօրէն Ժողովի անդամները զայն չէին վաւերացներ:

Ի՞նչ են պատճառները, որ Նուրհան Մանուկեան, իբրեւ պատրիարք, այս աներեւակայելի անխելք, չափազանց ապուշ քայլը ըրաւ: Դիտարկենք այս մարդուն ըսած խօսքերը.

- *«Ես աղքատ ծնայ եւ աղքատ մեծցայ, հիմա հարուստ պիտի ապրիմ եւ հարուստ պիտի մեռնիմ»,*
- *«Պզտիկուց ծնողներս ինծի անտեսեցին: Տասներեք տարեկանիս ինծի Անթիլիասի հոգեւոր վարժարան նետեցին»,*
- *«Երբ փոքր էի, եղբայրս ինձ ապտակեց՝ միևնույն կեանքին վերջը հետը չի խօսեցայ»,*
- *«Ես պիտի ծախեմ ամեն բան, եւ Հայաստանցիներուն բան մը չի պիտի ձգեմ»,*
- *«Եթէ ես չի ծախեի՝ Հայաստանցիները պիտի ծախէին»,*
- *«Երանի՛ ձեզի, դուք ամուսնացած էք եւ կին ունիք՝ ես կին չունիմ»:*

Երբ Նուրհան արքեպիսկոպոս՝ պատրիարք ընտրուեցաւ: Առաջին հիմար և անբաղաճաբար բանը որ ըրաւ՝ համացանցին մէջ հրապարակեց ծաղրական բաց նամակ մը կաթողիկոսին հակառակ, ցոյց տալով իր բարոյական մակարդակը, վրէժխնդրութիւնը եւ, որ աղքատ մնացած է տակաւին: Նաեւ իր շուրջի «բարեկամներէն» գովասանքներ ստացաւ. «Պրաւօ՛, Սրբազա՛ն, հիմա փաստեցիր, որ ջիղ ունիս»:

Այս խօսքերը խորին կապ ունին Նուրհան պատրիարքի վերաբերմունքի, ապրելակերպի եւ վարքի հետ:

Այս բոլորը մտային հիւանդ մարդու մը հոգեբանութիւն է:

Նուրհան պատրիարքը անտեսեց իր հոգեկան առողջութեան մասնագետի բուժումը, եւ փոխարէն գնաց ինքնաթերապիայի:

Տիկիներուն հազարաւոր տոլարներ արժող ադամանդէ մատանիներ կը նուիրէր, ի մասնաւորի այն տիկիներուն, որոնց հանդէպ ունենար երեւակայական համակրութիւն, յղացողական կապ մը, քանզի ինքը կին չունէր: Ուրիշներուն ոսկի ժամացոյցներ կը նուիրէր... եւ այլն, եւ այլն: Այդ դրամներուն սկզբնաղբիւրը ո՞ր է:

Պարետը, Մայք Սարեանի հետ ունեցած հարցազրոյցի ատեն ըսաւ, որ Տանի Բողոման երեք անգամ զանգահարեց եւ ուզեց օգտակար ըլլալ, իսկ պատրիարքը՝ մերժեց Տանիին: Շատ յստակ է, որ պատրիարքը կը գիտակցէ, որ Տանի Բողոման իրեն խաբեց, եւ շատ արագ այս հարցը երեւան հանեց:

Շատ կարեւոր է, որ երկու միլիոն տոլարը, որ ստացեր է վանքը այս պայմանագիրի համար, պէտք է անմիջապէս վերադարձուի հոն՝ ուրկէ, որ եկեր է, եւ հարկ է սկսել մրցոյթի գործընթաց մը Հայազգի գործարարներու եւ դրամարկուներու (investors) միջեւ:

Ակներեւ է, որ Նուրհան Մանուկեան չըսաւ ամբողջ ճշմարտութիւնը եւ չի համագործակցեցաւ. ո՛չ միաբանութեան, ո՛չ համայնքին եւ ո՛չ ալ փաստահաւաք փաստաբաններուն հետ: Անկա չի տուաւ ամբողջական տեղեկութիւնները, որովհետեւ կը վախնայ եւ կ'ամչնայ իր ըրածին վրայ եւ կը փորձէ իր շուկայական նախնադարեան

խորամանկութեամբ ծածկել իր գործած ոճիրը՝ Հայ Եկեղեցիին, սրբոց Յակոբեանց միաբանութեան եւ համայն Հայ եւ քրիստոնէայ աշխարհին դէմ: Միայն ու միայն իր անձնական հաճոյքին, առժամեայ զուարճանքին եւ ժամանակաւոր անձնական շահերուն եւ հպարտութեան ախտին յագուրդ տալուն համար:

Նուրհան պատրիարքի հրամանաւ՝ հայր Կորիւն, Երուսաղէմ ժամանած փաստահաւաք իրաւաբաններուն սլացիկ ցոյց տուած է ձախորդ համաձայնագիրը, Էջերը արագ դարձնելով եւ կարճ բացատրութիւններ տալով: Կարելոր Էջերը հոն պակաս էին: Չոր օրինակ՝ դրամական վճարումներու Էջը: Այս իրողութիւններն ի հարկ է կասկածներ կառաջացնեն, որ Նուրհան Մանուկեան անկեղծ չէ գտնուած եւ ինչպէս եւ ինքն իսկ կըսէ՝ «խաղեր խաղցած է» եւ կը վախնայ ի յայտ բերել ճշմարտութիւնը, որովհետեւ ինքը շատ լաւ գիտէ իր ըրածը:

*Այսօր Նուրհան Մանուկեանը պարտուած եւ վիրաւորուած «կեներալ» մըն է: Ինչպէս յայտնի է, պարտուած եւ դաւաճան «կեներալ» մը չի կրնար իջնել անգամ մը եւս պատերազմի դաշտը:*

Վերջերս Ն. Մանուկեան խոստացեր էր, որ երկու ամիս վերջ ամեն ինչ պիտի շտկուի եւ այս հարցը պիտի լուծուի: Անցեալին նաեւ, Նուրհան պատրիարքը խոստացած էր, դեռ Պարետին «կարգալոյծ» ըլլալէն առաջ, որ ամեն բան մօտ օրէն՝ պիտի վերջանայ, միամտաբար կարծելով, թէ իր դէմ ամեն հարց պիտի փակուի Պարետ Երեցեան մը վտարելով:

Ամեն պարագային այդ երկու ամիս ժամկետէն մեծ մասն անցած է:

Եթէ այս անգամ ալ ոչինչ չի փոխուի՝ կը նշանակէ հետևեալը. կա՛մ Նուրհան Մանուկեան կը խաբէ, կա՛մ ոչինչ կրնայ ընել, եւ կա՛մ (ինչպէս ըսաւ Պարետը այս վերջին հարցազրոյցին ատեն լրագրող Սագո Արեանի Յուլիս 21, 2023 թ.) «Պատրիարքը կը մերժէ համաձայնագիրը ջնջել» Հետևաբար այդ է պատճառը, որ երեք անգամ մերժեց տեսուիլ Տանի Բողմանի հետ այս հարցով: (Երուսաղէմի Հայոց պատրիարքը մեծ ճնշումների տակ է:<sup>2</sup>

Այս պարագային Նուրհան արքեպիսկոպոս պէ՛տք է մի կողմ քաշուի, եւ վանքին ղեկավարութիւնը պէտք է յանձնէ աշխատասեր եւ կարող միաբան հայրերու, որոնք համախորհուրդ և միասնաբար պիտի պատերազմին Նուրհան պատրիարքի գործած բոլոր ապօրինութիւններուն դէմ:

Երբ Նուրհան լուսարարապետ՝ պատրիարք ընտրուեցաւ 2013 թուականի Յունուարին, ատկէ քիչ մը ետք, սկսաւ բռնապետական (dictatorial) կերպով եւ անարդարացիօրէն կառավարել Սուրբ Աթոռը. ատելութեամբ, ոխակալութեամբ, վրէժխնդրութեամբ, չարաշահելով լիազօրութիւնները, խախտելով եւ ոտնակոխ ընելով անհատներու (ըլլայ հոգեւորական կամ աշխարհական) բոլոր իրաւունքները եւ մարդկային արժանապատուութեան տարրական սկզբունքները: Նուրհան պատրիարքը անտեսեց եւ անարգեց կանոնները ու օրէնքները սրբոց Յակոբեանց միաբանութեան: Հակառակ ազգային երկար ու ձիգ աւանդին՝ Հայոց վանքը եւ բոլոր կալուածները իր սեփականութիւնը սեպեց: Պատրիարքութիւնը փորձեց կառավարել առանց Տնօրէն

<sup>2</sup>  [1in TV , https://www.youtube.com/watch?v=MDv-gzwoYFw](https://www.youtube.com/watch?v=MDv-gzwoYFw)

ժողովի եւ միաբանութեան գիտակցութեան: Իսկ միաբաններուն ծաղրական ժպիտով կըսեր. «Մենք եղբայրներ ենք», - յընթացս սկսելով Հայոց վանքին կալուածները ծախել: Այս ձեւով ի ցոյց դրած է իր անձնական նպատակները, անյաջող ղեկավարութիւնը եւ մարդկային յատկութեանց արգահատելի «մակարդակը»:

Այն, ինչ որ կըսէ Պարետը իր հարցազրոյցին մէջ, թէ՛ «99 տարուայ վարձելը ընդունուած է», - ճիշտ չէ:

1. Երջանկայիշատակ տ. Թորգոմ պատրիարքի օրով ընդունուեցաւ յաւելեալ օրէնք Ընդհանուր Միաբանական Կանոնին, որով 49 տարուց աւելի հողատարածք վարձակալութեան չի տրուիր:
2. Որեւէ կալուածական հարց պէտք է ներկայացուի տնօրէն ժողովին հաստատման համար:
3. Եթէ վարձակալութիւնը վերաբերում է մեծ հողամասի մը, ապա Ընդհանուր Միաբանական ժողովը պէտք է քննարկի՝ այն հաստատման համար:
4. Ան պէտք է հրապարակուի եւ աճուրդի դրուի՝ վստահ ըլլալու համար, որ Հայոց վանքը կը ստանայ լաւագոյն գործարքը:

Այստեղ ես կը ցանկամ յաւելել քանի մը կետ.

Տ. Թորգոմ պատրիարքի ատենը, երբ գիտցուեցաւ, որ Յուսիկ եպիսկոպոս անհաւատարիմ գտնուեցաւ պատրիարքարանիս նկատմամբ, ինձմէ օգնութիւն խնդրեց<sup>3</sup>:

Ես խնդրեցի նշանաւոր իրաւաբան Առնոլտ Շփերին (Arnold Spaer), որն իմ հօր ընկերն էր Պաղեստինի Անգլիական Հովանաւորեալ շրջանին (British Mandate):

Անիկա վերանայեց այն պայմանագրերը, որ Յուսիկ եպիսկոպոս կնքեր էր պատրիարքի ստորագրութեամբ եւ Տնօրէն ժողովի վաւերացմամբ:

Պայմանագիրներուն բոլոր փոփոխութիւններու վերջ, անոնք կրճատուեցան մինչեւ 49 եւ 49 տարի, ամենևին ոչ այնպէս, ինչպէս Պարետը ըսաւ, թէ՛ «Թորգոմ պատրիարքի օրով կնքուած պայմանագրերը 99 տարով էին», - իբրեւ թէ:

Մենք պէ՛տք է վերջ տանք Նուրհան պատրիարքի՝ ամբողջ հայութեան նկատմամբ սպառնալիքներուն, խտրականութիւններուն եւ հալածանքներուն: Փաստաբանի միջոցաւ պէ՛տք է գանգատ ներկայացուի ներկա իշխանութեան եւ փաստաբանը պէ՛տք է տեղեկացնէ Ամերիկեան դեսպանատան:

Մէկ բողոքը կրնայ շատ բան չընել, բայց մի քանի բողոքներ կրնան շա՛տ բան ընել:



Կովերու Պարտեզի հարցով մեր պայքարը Նուրհան պատրիարքի դէմ պէտք է ըլլայ, ոչ միայն Սուրբ Քաղաքին մէջ, այլ նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ, որպէս ԱՄՆ քաղաքացի Նուրհան Մանուկեանի դէմ, քանզի անիկա Հայոց վանքին դարերով եւ հազարամեակներով շարունակուող, Աստուծոյ եւ Հայոց Եկեղեցւոյ վեհ պատմութիւնն ու փառքը փորձ ըրած է ապականելու. եւ Աստուած ո՛չ արասցէ, եթէ յաջողի...

Յուլակ Մոմճեան



<sup>3</sup> Ապագային ավելի մանրամասն կը ներկայացնեմ:

## Տեսակիւթեր.

- 1) Father Baret Yeretsian Tonight with Mike Sarian,  
 HorizonArmenianTV , <https://www.youtube.com/watch?v=D7bNRY6vrR0>
- 2) Երուսաղեմի Հայոց պատրիարքը մեծ ճնշումներու տակ է  1in TV ,  
<https://www.youtube.com/watch?v=MDv-gzwoYFw>
- 3) <https://www.jordannews.jo/Section-109/News/Jordan-Palestine-no-longer-recognize-Armenian-Patriarch-Nourhan-Manougian-28607>
- 4) <https://gagrule.net/jordan-and-palestine-no-longer-recognize-armenian-patriarch-nourhan-manougian/>
- 5) <https://twitter.com/301arm/status/1657047977234399236>
- 6) <https://www.newarab.com/news/pa-jordan-withdraw-recognition-armenian-patriarch>